

ԲԱԺԱՆՈՐԴ ՄԳՐՈՒԹԻՒՆ
 ուղիարիոյ համար
 Տարեկան 10 ֆր.
 Վեցամսեայ 5 »
 Բրատսլավայի համար
 Տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 2.50 ցր.
 Վեցամսեայ 1.25 »
 ԿԱՆԻՅԻՎ ՎՃԱՐԵԼԻ
 —)(—
 Դրանուցանակ տողը 20 սան-
 քիս կ. ետեքեկ անկի ան-
 ցանկերու համար 20 010
 գեղջ կըլլայ :

ՇԱՐՇՈՒՄ

Նախկ ևս գրամ դրկել
 Խմբագրութեանս հասցիին
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Գրութիւնք ևս չեն տրուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊՍԱՍԻԱՆՆՏՈՒ Յ՝ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ԶԻՆԱԿԻՑ ԱԶԳԱԴԱՆՆԵՐ

Ամեն մի հայի համար գաղտ-
 նիք չէ, որ մեր ազա-վազխառու
 դասակարգը միշտ հակառակ է
 եղել հայկական յեղափոխու-
 թեանը :

Մինչեւ 96 թուականը հայու-
 թեան այդ ամենափաստակար
 տարրը իր դաւերը լարում էր
 լուսթեամբ, աւելի փոքր չափե-
 րով, որովհետեւ թէ վախենում
 էր յեղափոխականի խիտ գա-
 տաստանից, թէ չէր ուղում աղ-
 գատեացի համբար ստանալ և
 վերջապէս դեռ կարողանում էր
 առանց իր հանգիստը վրդովե-
 լու, բաւականութիւն տալ իր
 շարժիական ազահ ձգտումնե-
 րին :

1896 թուականին պայմանները
 փոխվեցին. բռնակալ Սուլթանի
 հանձնի, ամենազօր Անճեան է-
 ֆէնդիին հասած հարածը եկաւ
 ապացուցանելու, որ Սուլթանը չէ
 խնայելու և հայ ազաներին, մա-
 նաւաճող եթէ սրանք բաւական
 դրամ ունեն :

Անճեանի ձեռքակալումը աւելի
 յուզեց և ցնցեց մեր ամենափա-
 սակար տարրին, քան թէ հա-
 ռիւրաւոր հայ բանտարկեալների
 անտանելի վիճակը և տաննակ
 հազարների սրախոլիտը լինելը :
 Խնդիրը վերաբերում էր սեփա-
 կան հանգստութեան, շահերի
 վտանգվելուն : Ազա-վազխառու-
 ները ոչ միայն ցնցվեցին, այլ և
 մտածեցին շուտով Սուլթանին
 փաստեր ներկայացնել իրանց
 ստրկական հաւատարմութեան,
 որպէս զի կարողանան իրանց
 վարկը բարձրացնել փաստիչահի
 աչքում :

Այդ զգուշի տարրի առաջին
 գործը եղաւ դրամով օգնել իր
 հարազատ եղբայրներին սրի ան-
 ցընող և Յունաստանը տեսող
 թուրք զինուորիկներին : Հայ ազա-
 թակը բացվեց թուրք զինուորի
 համար, այն ինչ նա միշտ փակ
 էր և փակ մնաց թէ հայկական
 յեղափոխութեան և թէ սովամահ
 հայաստանցի հայի համար :

Դրանով չը բաւականացաւ ազա-
 վազխառուն. նա իր եւրոպայում
 տարածված անդամների միջոցով
 սկսեց հակայեղափոխական պրո-
 պագանդա, և զգալով որ ինքը
 անընդունակ է այդ պաշտօնը կա-
 տարել սկսեց զինակից փնտռել :
 Հայ ազա-ն այնքան խօսելու և
 գրելու ընդունակ չէր, որ կարո-
 ղանար փոքր ի շատէ համոզիչ
 կերպով վարկարեկ անել յեղա-
 փոխութիւնը և նրա կարապետ-
 ներին : Բայց այդ անհրաժեշտ
 էր. յեղափոխութիւնը պէտք էր
 արմատից ոչնչացնել, իսկ դրան
 հասնելու համար հարկաւոր էր
 հայ ժողովրդին բարեկամ հան-
 դիսանալ և օձի լեզուով համոզել,
 որ ժողովրդի բոլոր դժբախտու-
 թիւնների պատճառը յեղափո-
 խութիւնը և յեղափոխականներն
 են :

Ազա-վազխառուն փնտռեց զի-
 նակից և գաւա : Յեղափոխական-
 ներից հալածված, արհամարհված
 և աշխարհի քոռ ժամանակում
 ազգասէրների համբար ձեռք
 բերած մի քանի հացկատակ
 գրչակներ անօթի ծարու թա-
 փառում էին Եւրոպայի զանազան
 անկիւններում. և ահա տաճկա-
 հայ ազա-վազխառուն իր ձեռքը
 մեկնեց այդ ցեց կեղծ ազգա-
 սէրներին, ասելով մենք ձեզ
 կօգնենք. դուք ձեր լեզու բոլոր
 շնորհքը գործ դրէք յեղափոխու-
 թիւնը և յեղափոխականներին
 մրտեւելու : Հացի խնդիրը և վի-
 ռուրոված եսը գլխաւոր ազգակ-
 ները եղան այդ պարազիտ գըր-
 չակների ազգադաւ գործունէու-
 թեան : Ստեղծվեց մի զգուշի լրա-
 գրութիւն, որը դարձաւ ստի,
 կեղծիքի, անբարոյականութեան
 աղբիւր և շտեմարան : Վայրկեան
 եկաւ, որ ամեն մի ազնիւ հայ
 սկսեց մտածել թէ դարերով
 ստրուկ հայը այնքան ստրկացել,
 այնքան ստորացել է, որ բացի
 ցած գործերից նա ոչ մի բանի
 ընդունակ չէ :

Բարեբախտաբար իրողութիւնը
 այդպէս չէր. զինակից ազգա-
 դաները չէին կարողացել ըմ-
 բռնել, որ հայկական յեղափոխու-
 թիւնը տարիներ ընթացքում

ստեղծել էր մի մաքուր, սոկուն
 և զօրեղ յեղափոխական տարր,
 որը ամեն զէնքով պատրաստ էր
 կռւելու իր թէ ներքին և թէ
 արտաքին թշնամիների հետ և
 ջախջախելու նրանց գլուխները :

ՎԱՐԳՕ

ՕՐՈՒԱՆ ՆԻԻԹԵՐ

Չը յիշուի. — Գեղուկերը. —
 Անկողնակալ

«Նարժում»ի հաղորդած լուրը
 Օրմանեանի ստոր ձեռնարկի
 մասին, և անոր դէմ գրուած
 առաջնորդները իրենց ցնցող
 ազգեցուցիչութիւնը ունեցան հան-
 րութեան վրայ :

Ժողովուրդին բողբոխ ձայնը
 դադարեցուց անոր անունի յիշա-
 տակութիւնը Վառնայի եկեղե-
 ցիին մէջ. բան մը որ կապացու-
 ցանէ թէ Հայութիւնը իր կրած
 շարժարանքներուն սակ այնչափ
 ընդարմացած չէ, որ բոլորովին
 անտարբեր մնայ դէպի իր ազգ-
 դային շահերը և պատիւը կա-
 տարուած արչաւանքները :

Հակառակներդամորէն թափ-
 ուած թոյներու և հիւանդոտ ջի-
 վերու ցօղած արցունքներուն,
 մեր մէջ կայ ու կը մնայ անխա-
 դախ ու առողջ մաս մը, որ ոչ
 ապականած է և ոչ ալ թուլցած :
 Այդ շարակոչկոծ, բայց անա-
 լատ մասն էր՝ որ այնքան ուժ-
 գին կերպով որոտաց միթիւկ-
 ներու մէջ և որ գիտէ և պիտի
 գիտնայ իր բողբոք վերցնել
 ձայնով կամ զէնքով :

Ուրախ ենք մենք և հպարտ
 այդ անխաղաղախ ոգիներուն
 համար. մեր փրկութեան միակ
 յէնակէտն են անոնք : Խաղաղու-
 թեան վե հաժողովէն աւելի՝ ա-
 տոնց գումարուած, զոպուած
 զայրոյթի ուժգին պայթումն է՝
 որ լաւագոյն ելք մը պիտի տայ
 հայութեան պահանջին :

Պէտք է ցնցել այդ ուժը,
 ստուարացնել ու միշտ շարժման
 մէջ դնել, վարժեցնել զանի
 գործելու. ահա մեր ազատագրու-
 թեանը ձգտող հայ հրապարա-

կադրին աւագ պարտականու-
 թիւնը :

Այդ պարտականութիւնը ոչ
 կրնան ըմբռնել և ոչ ալ գնա-
 հատել բոլոր այն գնչուները
 որոնք ոչ սուսն ունին, ոչ Հայրե-
 նիք, ոչ զգացում և ոչ սրբու-
 թիւն :

Մշտնջենաւոր խնկարկունները
 ոսկի կուռքերու, միշտ պատ-
 րաստ ճկելու, սողալու բարձ-
 րացող խարաղանին առջեւ. ա-
 մէն անկեղծութիւն, ամէն աղ-
 նուութիւն կը համեմատեն իրենց
 ստամոքսի և կաշիի շահերուն
 հետ :

Կուչո պահեցէք ատոնց փորը,
 կալական մը դրէք ավերնուն
 մէջ. ու այդ գնչուները ամէն եղա-
 նակ կերգեն, ամէն տեսակ պար
 կը կաղմեն : Անօթի ձգեցէք ու
 ահա պիտի տեսնէք թէ ինչպէս կը
 սողոսկին ամբոխին մուծ խաւե-
 րուն մէջ. պղտորելու, թունաւո-
 րելու միամիտները ու տգէտնե-
 րը : Իրենք՝ յաւիտեական ազ-
 տոտներ, ամէն կողմ թուք ու
 մուր կը փսխեն, չեն կրնար
 տանիլ՝ որ իրենց սիւ խաւա-
 րին դիմաց մաքուր, պսպղուն
 կէտեր գտնուին :

Այդ անգոյն, անորակելի
 գնչուներու համար ամէն առիթ
 յարմար է իրենց ստոր դերը
 կատարելու : Ընթերցողները թող
 չի զարմանան երբ յայտնեմ թէ
 Օրմանեանի չը յիշուին գործի
 գուռ բացաւ ատոնց առջին :

Ատոնց համար ի հարկին Սուլ-
 թանը բարեգութ տէր մըն է և
 Օրմանեան հրեշտակ մը . . .

Օրմանեան որուն օրով սահ-
 մանագրութիւնը մեռաւ, կիլիկիոյ
 կաթողիկոսութիւնը սառեցաւ,
 եգիպտոսի առաջնորդութիւնը
 վիժեցաւ, և այլն և այլն : Այս-
 պիտի մէկու մը թեր ըլլալու հա-
 մար՝ մարդ քիչ մը տրամաբան
 ըլլալու է : Բայց երբ տեսնուեր է
 որ գնչուն քիչ մը տրամաբան
 ըլլայ :

Այդ տրամաբանութեան քիչ
 մըն ալ տալու է անոնց, որ ան-
 կողմնակալութիւն կը քարոզեն,

որպէս զի իրենք գոնէ քիչ մը աւելի քիչ կողմնակալ ըլլան :

Չեմ հասկնար թէ ինչո՞ւ կուզուի որ լրագիրներու մէջ վէճերը դադրին : Ադոնք երբ օրինաւոր սահմանի մէջ կը կատարուին օգտակար կըլլան թէ գործին և թէ հանրութեան : Անցած է այն դարը երբ բաւական կըլլար «վարդապետն ասաց» :

Չուզանեմ «պատասխանատուութիւններ» կարգացողներէն անոնք, որ հեղինակին պէս ազէտ էին մեր վերջին պատմական ձեռնարկէն՝ «ամէն» ըսին : Բայց երբ պէտք եղած փաստերով ապացուցուեցաւ անոնց խախտում հիմքը, համոզուեցան որ սխալեր են եղեր :

Այսօր նոյն մարդը ցաւագարի շեշտով «ներկան» կը գրէ, և երբ փաստարկ համբերութիւնը կուենայ Չ. ի ոգին մերկացնելու, ինչո՞ւ ելլենք և ըսենք թէ ալ հասարակութիւնը կը ձանձրանայ անտեղի վէճեր մտիկ ընելէ : Հապա թող տալու է որ Չ. ելլէ և «վաղը» կամ «ապագայ» մըն ա՞լ գրէ դիւահարի ոճով, եւ «աղքատ ուղեւորէն» խմբագրուած անգոյն թերթերը՝ յանուն «անկողնակալութեան» զանոնք արտատպեն . . .

Անոնք որ Չ. ի բարիքը կը կամենան, թող խրատեն զանի որ իր կօշիկէն վեր չելլէ . այդ բանին է որ կաշխատի «Շարժում» ալ :

ԵՐՈՒՍԱԶ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բրովիսենս, 22 Մայիս

«Յանութիւն, հայեր. անօթի կը մեռնինք» . — այս աղաղակը փրթեցաւ նախ Զէյթունէն, ևս քան ալ վանէն և փրօվիտէնսցիներու ալ ականջին հասաւ :

Այդ նպատակի համար երէկ Մայիս 21ին մեծ ժողով մը եղաւ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (7)

Ի. ՎԱԶՈՎ

ՊԵՆՍԻՆԵՆ

(ԻՐԱԿԱՆ ՎԷՊ ՀԱՅՐԱՌԻԿ ԵՐ ԿԵԱՆՔԷ)

Յանկարծ հայդուկներու շուրջը խոնուած բազմութիւնը սկսաւ զիբար կոխկոտել և հրել : Շատերը գլուխին ևս զարձուցին ի՞նչ ըլլալը հասկնալու համար :

- Մի թողուք, կը պոտար մէկը :
- Ետ դարձուցէք :
- Ի՞նչ է, որդի պէս կը սողոսկայ :
- Կուզէ սպրդիլ Սլավոնի մօտ մի՞ թողուք :

Չայրոյթը և իրարանցումը ամբոխի մէջ կաւելնար. նոր մէկը կուզէր բռնի ամբոխի մէջ սպրդիլ :

Սլավոն, որ ամէնքէն բարձր էր, աշտարակի մը պէս, ամէն բան սեւաւ և հասկցաւ գործի եղելութիւնը :

Ատենախօսեցին Տիարք Պէննէան, Մարգարէսեան, ամերիկացի հայասէր էլիզ Սթոն Պէննէան (՝) և վան ծնած ու Հայաստանի այլ և այլ քաղաքներ միսիօնարութեան պաշտօն վարած Մըստըր Ալէն (վերջին երկուքը հրաւիրուած էին Պօթօնէն) :

Ժողովը բացուեցաւ Նիւ-Եօրքի «Հայրենիք» թերթի «անխտիր օգնելու ենք» խմբագրականի ընթերցումով : Կարգաւ ատենախօսեցին բարի ամերիկուհիներ և երկու հայ ատենախօսներ, որ ոգևորեցին ժողովուրդը, կոչ ըրին առատօրէն օգնելու իրենց վանքի արնակիցներուն :

Հերթը եկաւ ամերիկացի՝ բայց հայախօս մըսթըր Ալէնին : Հայրք օտար բարեկամներէն հայը ամենէն աւելի ճանչցող այս վեհ հոգին սրտաուռ կերպով նկարագրեց Հայաստանի և մասնաւորապէս վանի կոտորածները, և աւելցուց. «ո՞վ է այս կոտորածներու պատասխանատուն» : Ոմանք կըսեն՝ յեղափոխականները, ոմանք՝ թուրք խուժանը, ոմանք ալ՝ ուրիշները : Սակայն, բարեկամներ, ատոնք ամէնքն ալ սխալ են : Նախ որ յեղափոխականները պատասխանատու չեն, վասնզի կառավարութեան բարբարոս ու բռնակալ ընթացքէն ծնաւ յեղափոխութիւնը : Կոտորածէն տարիներ առաջ (ես վան էի) կառավարութիւնը շատ խիստ չէր հայերուն հետ և յեղափոխականներն ալ չա՛տ քիչ էին : Իսկ երբ կառավարութիւնն սկսեց կամայականօրէն խտանալ գէպի հայերը՝ յեղափոխականներն ալ սկսեցին շատնալ ու օր աւուր անիլ : Կառավարութիւնը ինքն էր, որ ժողովուրդը յեղափոխական կը դարձնէր : Այսպէս, օրինակ, վանի քաջ Տէրօյեանը (վազգէն) խոհեմ, ազնիւ երիտասարդ մըն էր. կառավարութիւնը անիրաւօրէն զանի բանտարկեց ու նեղեց : Երբ Տէրօյեան բանտէն ազատեցաւ, դարձաւ քաջ ու անձնուրաց յեղափոխական մը, որ շատ նեղութիւն տուաւ կառավարութեան ու սարսափ ազդեց թուրքներուն :

(՝) Այն ազնիւ կինը սկիզբէն ի վեր պաշտօնան եղած է Հայկական դատին իր ակէյտէս ճըրնըրը՝ թերթով : Մեր բանաստեղծներու շատ մը ոտանաւորները անգլիերէնի վերածելով հրատարակած է ևս այլն :

- Եկողը նետօի կի՞նն է, հարցուց ան :
- Նետօի կի՞նն :
- Ետ հրեցէք, դարձեալ կը կանչէին գիւղացիները :
- Լաւ բանի համար չի գար. չէք տեսնար՝ աչքերը ինչպէս կարմրած են :
- Հոս ի՞նչ կը փնտոնես :
- Ե՛տ, կաղաղակէր ուրիշ մը :
- Սլավոն, Սլավոն, թո՞ղ որ գամ, կը կանչէր նետօի կինը, յուսահատաբար զինքը վանողներուն վրայ իյնալով :
- Սլավոն ձեռքովը շարժում մը ըրաւ, նոյնպէս և վերանան. երկուքն ալ ըսին :
- Թողէք որ նետօին կինը գայ : Այս հրամանին վրայ խոնուած ամբոխը տեղ բանալով՝ ճամբայ տուաւ նետօի կնկան :
- Եկուք, հարս. ի՞նչ լսելիք ունիս, խտարէն ըսաւ Սլավոն :
- Անոր ի՞նչ ուղիւն ալ, ի՞նչ սպասելի ալ գիտենք. բայց այդ յոյսը թող սրտէն հանէ. զայրացած կը խօսէին քանի մը հոգի :

րուն : Այդպէս պատահեցաւ շատերու հետ : Ուրեմն ժողովուրդի մեծ մասը քնական օրէնքով ստիպուած սկսեց յեղափոխութեան գիմել, վայրենիքի բռնարար ալ պատասխանատու չեն. ամէն տեղ կոտորածը կառավարութեան փողով կը սկսէր ու անով կը վերջանար : Ըսել է կոտորածներուն պատասխանատուն միայն կառավարութիւնն է և ուրիշ ոչ ոք» :

Ետքէն մ.ս. Ալէն քաջալերեց հայերը՝ որ իրենց սկսած գործը շարունակեն անվատ կերպով և աւելցուց. «կարծէ ու պէտք է որ ամէն հայ իր ունեցածը սայ այս աւուր թշուառ վանքի մեծ հայերուն» :

Հոս պէտք կըգամ ըսել թէ՛ թող օրինակ անեն ու ամչնան օտարէն քիչիկ մը հացի համար պոչերնին շարժող հայ գրագէտ տիրացուները և ատար անոր ոտքերը լըող Ամերիկացի պատուելիներն ու քարոզիչներն, որ իրենց ողորմելի գոյութիւնը պահպանելու համար ստփրտակ կանոնն ամէն տեսակ սրբութիւն, գաղափար ու գործ եւ իրենց պիղծ բերաններով աղօթք ըրած ժամանակնին իսկ յեղափոխականներու միւր կը ծամծմեն ու «յեղափոխութիւն» բառը բերաննին առնեն իսկ մեղք կը համարին : Օտար սրբատեր կան, որ աւելի մօտիկ կը բարբախեն Մայր-Հայաստանի, քան իր հայ անուն կրող կարգ մը բոշա-զաւակները : Անցնինք :

Յարգելի միսիօնարի ճառէն վերջ հանգանակութեան սկսուեցաւ, ժողովին ներկայ էին մօտ 400 անձեր : Ատոնց կէսը հազիւ մասնակցեցաւ հանգանակութեան, բայց նորէն գոյացաւ 700 տղարէն աւելի : 115 սոյար ալ շարաթ մը առաջ հանգանակուած էր՝ ընդամէնը շուրջ 800—850 սոյար եղաւ ու դեռ կը շարունակուի :

Հարկ չիկայ ըսել թէ՛ ընդհանրապէս չունեցող, աղքատ դասակարգն էր սուտղը :

Փրօվիտէնսցի, ընդհանուր առմամբ, զգալուն, կենդանի և եռանդոտ է . . . բայց քիչ չեն և կենդանի զիակները, մեռածները . . .

«Շարժում» շրջափարակի օրուան թւոյն մէջ, սյուպիսի փափուկ ժամանակի մէջ ազգին ճակատագրին հետ խաղացող և իր զղուելի ներկայութեամբ և յայտնի դաւաճանութիւններով Պատրիարքական գահը սրբապղծող Օրմանեան էֆէնտիին զղուելի գործերը կարգալով յուզուած երկրասարդութիւնը եկեղեցի գիմած էր, գոնէ արտասահմանի ազատ եկեղեցիներուն մէջ անոր անարգ անունին յիշուելը գաղթեցնելու նպատակաւ. ուստի երբ պատարագիչ քահանան պիտի յիշէր Օրմանեանին անունը, «չը պիտի յիշուի» պօռաց ժողովուրդը, և պատարագիչ քահանան ժողովուրդին այս արդար բողոքին անսալով, չի յիշեց անոր անունը, և այսպէս առանց չըկի խնդիրը փակուած էր : Այդ պահուն հաճը-աղա մը խիստ նախատական խօսքերով անարգեց ժողովուրդն ու երկրասարդները : Ես չգիմանալով այդ կոպիտ վարմունքին՝ «խնդիրը չէք հասկնար. ի՞նչ իրաւունք ունիք ատանկ անարգական լեզու գործածելու» ըսի իրեն :

Անմիջապէս յիշեալ աղան հրամայեց որ ժոնտար կանչեն, դեռ ժանտարները չեկած՝ զինքը շրջապատող քանի մը հացկատակներուն ալ (վորուս, տշարը աթըն) ձեծեցէք, դուրս նետեցէք հրամանը տուաւ : Այս տեսակ անարգ լեզու շատերուն գործածեց և անոնց հետ ալ վիճաբանութիւն ունեցաւ : Այս միջոցին խնդիրը բաւական տաքցած էր. ժանտարները գալով և բանիմաց ազգակիցներ միջամտելով, խնդիրը փակուեցաւ : Հարկ չիկայ ըսելու թէ յիշեալ հաճի էֆէնտիին շորկէկ բարբարոսական հրամանին վրայ, մեղի

թեւէն իջնալով, աւագակ Սլավոնի ոտքերը լղէր : Չարմանալի՛ բան . . . ամբոխի անգթութիւնը կարծես քիչ մը մեղմացաւ :

Այս խոնարհութեան տեսարանը ներկայ եղողներուն սրտերուն մէջ մարդասիրութիւն շարժեց. փոխանակ սարսափելի ատելութեան, որով քիչ մը առաջ ամէնքն ալ լիցուած էին, այժմ մի նոր և բարի զգացում մը արթնացաւ միեւնոյն սրտերու մէջ : Երկրասարդ կնկան վիշտը սովորէն վրայ ալ ազդեց, որովհետեւ ան ևս ոչ մէկ յանցանք ունէր. այս սրտաշարժ գէպը ամէնքն ալ յուզեց :

— Ինձ հարս, ըսին անդիլն քանի մը հոգի :

Եւ յետոյ գաղանի խորհրդակցութեան մը համմատ, լուռ վճիռ մը տուին և յայտնեցին վճիռօտանի կաղերսեմք քեզի՛ նետան ազատ թող :

— Ազատ թող, ազատ թող, ըսին ուրիշները. թող պայ և հասկնայ՝ թէ մեր շնորհիւն է՞ որ պիտի սպրի :

— Կը ներենք իրեն :

ճեծելու համար վրանիս յար-
ձակողներուն եթէ մենք ալ ա-
ռիթ տայինք՝ մեծ խառնակու-
թեան պատճառ պիտի ըլլայինք։
Բայց մենք լռելը գերադաս հա-
մարեցինք, քան թէ այսպիսի
չնչին պատճառաւ մը մեր ազգին
օտարներու առջեւ կրկին ան-
ուանարկուիլը լսել։ Ողջամիտ հա-
տարակութեան դատողութեանը
կենթարկեմ յիշեալ աղա-էֆէն-
տիին արարքը։ (*)

Ա.

ՄԱՍՈՒԼԻ ՇՈՒՐՋ

(ԻԿԱԼԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ)

Պատ. ձ. Լ. Փառլ, Կեսարիայի
միսիոնարը, Թրիքի թիւ 6 կեդե-
ցիին մէջ թէ առաւօտ ե թէ ե-
րեկոյին խօսեցաւ Թուրքիոյ
քրիստոնէից վրայ։

Մը. Փառլ Անտօլըը համալ-
սարանի ընթացաւարտներէն է,
քսան տարեկան հետէ կաշխատի
Թուրքիոյ մէջ և յառաջիկայ
սեպտեմբերին պիտի վերադառ-
նայ իր գործին։

Առաւօտեան քարոզին երկարօ-
րէն խօսեցաւ հայկական խնդրին
վրայ և զգայուն յիշատակներ
պատմեց կոտորածի օրերէն։ Խօ-
սեցաւ Տիրոջը գործին տարած-
ման մասին յոյներուն և հայերուն
մէջ. «Կը ջանանք, ըսաւ, անոնց
անուանական քրիստոնէութիւնը
վերածել իրական քրիստոնէու-
թեան»։

Կոտորածին պատճառներուն
վրայ խօսելով՝ ծանրապէս ամ-
բաստանեց յեղափոխականները,
որոնցմէ շատերը Եւրոպայի մէջ
հանգիստ նստած, իրենց հրա-

(*) Ուրախութեամբ կարձանագրենք,
որ այդ թիւրիմացութիւնները գոց-
ուեցան. Օրմանեանի անունը չի միշ-
ուի որ այլևս եւ գնչուներու ջանքը՝
Չուրը պղտորել՝ բան մը որսալու
համար, ինքնին Չուրը ընկաւ։
Ծ. Խ.

մաններով կոտորածներուն պատ-
ճառ եղան։ Յայտարարեց թէ
կրօնքը պատճառ եղած չէ կո-
տորածներուն, թէեւ կոտորած-
ները չեն կրնար չափազանցուիլ,
բայց թէեւ Թուրքը գէշ է, սա-
կայն Աւետարանի լոյսին ազդե-
ցութեան տակ օր մը կրնայ բո-
ւորովին փոխուիլ։

Թէեւ ուղղակի միսիոնարական
ճիգ չը կայ Թուրքերուն մէջ,
բայց անոնցմէ շատեր կը հետա-
քրքրուին քրիստոնէական հա-
ւատքով, սակայն չեն համարձա-
կիր ուղղակի իրենց համակրու-
թիւնը յայտնել քրիստոնէական
կրօնին։

Պատ. Փառլ ուղերձներ ըրաւ
կիրակնօրեայ վարժարանին ա-
շակերտներուն, որոնք նիւթապէս
կօզնեն Կեսարիայի միսիոնարա-
կան գործին։

Երեկոյին խօսեցաւ արեւելեան
սովորութեանց և ընկերային
կեանքին վրայ։

«Բարի քաղաքացի»-ին պատաս-
խանը։

Մեծ ցառով կարգացի «Իկըլ»-ի
մէջ թէ Մը. Փառլ աններելի ու-
ճիր կը համարէ հայերուն համար
Թուրքերու հարստահարութեանց
գէժ բողոքելը։ Մը. Փառլ աւելի
ալէկ կընէր եթէ պաշտպան
կանգնէր սկարներու բողոքին,
ինչ որ աւելի կը վայելէր իր պաշ-
տօնին։

Եթէ Մը. Փառլ քիչ մը ուշա-
դրութիւն ընծայէր, պիտի գիտ-
նար թէ 80,000 որբեր կան հիմա
Հայաստանի մէջ, հազարաւոր
հայեր անթոթութենէ կը մեռ-
նին։

Հակառակ իր ենթադրական
տեղեկութեանց ի մասին իր մի-
սիոնարական շրջանակի ժողո-
վրդեան վիճակին և սովորու-
թեանց, կը կարծեմ թէ Մը.
Փառլ բան մը չը գիտեր և բան
մը ըրած չէ իր կիրակնօրեայ

դպրոցէն զատ։ Կը կարծէ՞ թէ
ազատութեան իզձը մահացու
մեղք է հայուն համար։

Չեմ ուրանար թէ յեղափոխա-
կանները մեծամեծ սխալներ
գործեցին, բայց Մը. Փառլ չա-
բաշար կը սխալի երբ կը կարծէ
թէ ներկայ չարիքներուն պատ-
ճառը անոնց կը վերաբերի։ Յե-
ղափոխականներու գոյութենէն
յառաջ, Թուրքը դարերէ հետէ
կը գործադէր իր ճիւղային ու-
ճիրները։

Թուրքիոյ մէջ երկու ցեղեր
կան, որոնց միջեւ տարբերու-
թիւնը կը հաւասարի կէս գիշեր-
ուան և կէս օրուան տարբերու-
թեան։ Այս երկու ցեղերուն հա-
մար անկարելի է հանդարտու-
թեամբ քով քով ապրիլ ցորչափ
իրենց երկիրը, իրենց ծագումը,
իրենց կրօնքը և իրենց գաղա-
փարները այնչափ տարբեր են։
Այս իրողութեանց առջեւ, Մը.
Փառլ ինչպէ՞ս կրնայ ներկայ
կոտորածներուն պատճառ համա-
րել յեղափոխութիւնը և ոչ թէ
կրօնքը։

Մաղբիլի է ըսել թէ բազմա-
թիւ Թուրքեր կը հետաքրքրուին
քրիստոնէական կրօնքով և օր մը
պիտի դաւանին անոր ճշմարտու-
թիւնը։ Ինչո՞ւ հիմակէն չեն
սկսեր զանոնք հաւատքի բերել։

Հետաքրքրական է ինծի հա-
մար գիտնալ թէ արդեօք Մը.
Փառլ ցարդ մօտեցած է միակ
Թուրքի մը և քարոզած է անոր
Աւետարանի լոյսին վրայ, Չէ թէ
Թուրք մը չը համարձակիր քրիս-
տոնեայ ըլլալ, բայց նաեւ ոչ ոք
կրնայ մօտենալ և ըսել թէ Մահ-
մետականութիւնը սոտ է և Քրիս-
տոնէութիւնը ճշմարիտ։

Բարի Բաղստացի

Ապրիլ 19

Ուրիշ բողոք մը։

Պատ. Փառլի յարձակումը յե-
ղափոխականներուն վրայ, ան-

արդարանալի է, վասն զի հայ
յեղափոխութիւնը ծագում առած
է երկրին մէջ տիրող բռնապե-
տութենէն։ Թուրքիոյ կրօնական
ատելութիւնը գլխաւոր պատ-
ճառն եղած է, և տակաւին է,
կոտորածներու և հարստահարու-
թեան։

«Իկըլ»-ի երկու շաբթիկի թիւին
մէջ կը կարդամ Մը. Փառլի մէկ
քարոզը, որ կը յայտարարէ թէ
կոտորածներու պատճառը կրօ-
նական ատելութիւնը չէ, ինչ-
պէս աշխարհ կը կարծէ, այլ հայ
յեղափոխութիւնը։

Յաւայի է որ Մը. Փառլ իբր
քրիստոնէութեան և քաղաքա-
կրթութեան միսիոնարը, Թրի-
քի թիւ 6 նման եկեղեցիի մը բն-
մին վրայ կանգնած, կը նախատէ
հայ յեղափոխութիւնը։ Ճշմար-
տութիւնը այնչափ պարզ է որ
արդարացում չը կայ զայն հաս-
կընալու։

Հարցում մը պիտի ընեմ Մը.
Փառլի։ Հայ յեղափոխութիւնը
գոյութիւն ունէ՞ր պուլկարական
կոտորածներուն ժամանակ երբ
Պայաղլուի հայերը բնաջինջ ե-
ղան Թուրքերէն։ Յեղափոխական
ցոյցեր կային երբ Մուսա պէյ,
Ալի պէյ և բազմաթիւ ուրիշ
Թուրք և քուրդ պէկէր կը բռն-
նարարէին հայ կոյսերը, Չէ՞ մի
որ հայ ազդիկներ իրենց սուրնե-
րէն բռնի հեռացնելով կը զըր-
կուին Թրքական հարէմները։
Ինչո՞ւ Թուրքիոյ հայերը Թուր-
քերէն կը խօսին։

Երբ յոյները, սերպերը և պուլ-
կարները իրենց ազատութեան
համար կը կռուէին, հայերը
հլու թեամբ կը տանէին իրենց
լուծը, հաւատարիմ հպատակներ
էին և երկրին ցորենը կար-
տագրէին, սակայն Թուրքը չէր
խնայեր անոնց ալ։

Բոլոր քուրդ աւազակները կը
պաշտպանուին Թրքական կառա-
վարութենէն և Սուլթանը շքա-
նշաններ կը զրկէ անոնց։

Գթութիւն եւ ներում խնդրող
ձայներ դուրս թոսն ամէն բերնէ-
ի պատիւ մարդկութեան մահուան
պատիւ խնդրող ոչ մի ձայն չը կար։

— Շատ լաւ, ըսաւ Սլավոն, և
զանալով նետօր կնկան՝ շարունա-
կեց։

— Նետօր հարս, այս երեկոյ ընթ-
րիքը ամուսինիդ հետ պիտի ընես։
Նետօն պիտի գայ... Ինձմէ պատու
խօսք. հիմակ մեզի բարի ճանա-
պարհ մաղթելու համար երեք տար-
ուան գինիէն հրաժեցր։

Երջանիկ կիւնը ուրախութենէն
բառ մը չը կրցաւ արտասանել.
շուարած՝ ջերմագին կը համրուէր
այն ձեռքերը, որոնք իր նետօն
իրեն պարգևեցին։

— Թող ալ էրկիդ ասկէ վերջը
խելքը գլուխը ժողովէ, մարդ ըլլայ
և յիշէ որ Պուլկար է, կըսէին քանի
մը պառաւներ, յորդոր կարգաւով
երիտասարդ հարսին։

— Կըլլայ, կըլլայ, վառեակի պէս
հեզ եւ հրեշտակի նման բարի պիտի
ըլլայ նետօն, պիտի ըլլայ նետօն,

պիտի սեանաք, ես ձեզի խօսք կու-
տամ, կըսէր նա անգիտակցաբար։

— Հայտէ, ինչպէս որ ըսաւ վոյվո-
տան, բեր նայինք, սա երեք տար-
ուան գինիէն... այս տօնը քու-
կըզ է։

Նետօր կիւնը շուտ մը սուս վա-
զեց. քիչ մը յետոյ չօրպածի նետօր
երեք տարուան ճերմակ գինին հրա-
պարակին վրայ կը պարպուէր ուրախ
խօսակցութիւններով և բարեմաղ-
թութիւններով։

Կարծես թէ ամէնքն ալ երջանիկ
էին եւ գո՞՞ որ լաւ բան մը ըրին։

Այս դէպքէն վերջը Սլավոնի հրո-
սակախումբը դարձեալ կորսուեցաւ
և ստոյգ բան մը չը լուսեցաւ անոր
մասին։ Տեսակ տեսակ լուրեր կը
պատէին. ոմանք կը հաւատացնէին
թէ Վրաստանի պալատի մէջ ամէնքն
ալ մորթուած են զապիթիէներէն.
շատերն ալ ուրիշ բաներ կը պատ-
մէին։

Իրողութիւնը սա էր, որ Սլավոն
ուրիշ տեղեր ասպատակելէ ու կո-

ղոպակէ վերջ, կարձակէ իր հրո-
սակախին խումբը և ինքը իր կըն-
կանը հետ Սեպրիա կանցնի ու հոն
Նիկիտանի մէջ կը հաստատուի։

Վրասիի գանձը, որ ընթերցողը
անշուշտ կը յիշէ, մեծագոյն մասը
մնաց Սլավոնի ձեռքը, որով հոն
վաճառականութեան սկսաւ և շուր-
հիւ իր ջանքերուն ու ընդունակու-
թեանց Նիկիտանի վաճառականու-
թեան մէջ առաջնակարգ տեղ գրա-
ւեց։

Երբ Պուլկարիան ազատեցաւ,
Նիկիտանի վաճառականը ետ դար-
ձաւ իր հայրենիքը, եւ հիմակ Շ. քա-
ղաքը հաշտարար դատաւորի պաշտօն
կը վարէ։ Պարտասար ենք ըսել որ
մեր փոստա կողոպտող աւազակապե-
տը նահանգին ամենալաւ հաշտարար
դատաւորի հոչակը հանած է։ Նա
այնչափ հմուտ է իրաւունքը արդա-
րութեամբ որոշելու, որչափ առաջ
հմուտ էր զապիթիէները քաղցիներով
զլորելու մէջ։

Բայց մարդ ի՞նչ չի սորվիր։
Քանի մը բառ եւս Սլավոնի սիրա-

պործութիւններու մասին Վէլմէլի
մէջ։ Խմբով գիւղը իջնալը Ս. Պետ-
րոսի տօնին օրը, միաց խիստ գաղտ-
նի։ Թուրքերը բնաւ չկրցան իմա-
նալ Վէլմէլիներու այդ սրբակից
եղբայրութիւնը և բանակցութիւնը
աւազակներու հետ։ Միակ շար մար-
դը որ կրնար իմաց տալ Թուրք կա-
ռավարութեան, այդ ալ նետօն էր։

Իրաւ որ նետօն միեւնոյն գիշերը
սուս վերադարձաւ, բայց այն օրէն
ան ուրիշ մարդ դարձած էր. ըն-
թերցողը պիտի հասկնայ, եթէ բա-
ցատրենք որ շատ մը ձերբակալուած
գիւղացիներու մէջ, որ 1876 թուի
արիւնահեղ դէպքերուն պատճառաւ
չղթայակապ Սօֆիա կը տանէին,
իբր գաղտնի օգնութիւն տուողներ
Բոսիւիւ արշաւանքին, ամէնէն ա-
ռաջին տեղը նետօն չօրպածին կը
բռնէր։

Թարգմ. Պ. ՍիրէլճեԱՆ

ՎԵՐՋ

—)(—

Թուրքը կը հաւտայ թէ իսլամը տէր է և քրիստոնեան գերի: Քրիստոս խաչ տուաւ իր հետեւողներուն, իսկ Մուհամմէտ սուր:

Յաւալի է որ ամերիկացիք չեն գիտեր թէ որչափ սուղ արժամ է հայերուն քրիստոնեայ մնալ այդ երկրին մէջ, ուր ամէն միջոցներ կը դործադրուին իսլամացնելու ամէն ոք:

Անհատնում հալածանքները յառաջ բերին յեղափոխական ու գին հայոց մէջ, ուղեցին պահել իրենց ազգութեան գոյութիւնը, բարեկաւել իրենց քաղաքական կեանքը և աղատ ազգերու շարքին մէջ դասուել: Սուլթանը խեղդել ջանաց այս զգացումը իր արհաւիրքներով: Գրգռեց իսլամներու մոլեռանդութիւնը և Հայաստանը վերածեց արեան և կրակի հեղեղի:

Սուլթանը կաշխատի իսլամացնել ամբողջ Հայաստանը: Այս է խնդիրը:

Յեղափոխութիւնը ստուերն է բռնապետութեան: Անիրաւութիւն է ստուերը պատասխանատու բռնել կոտորածներուն: Ոճիր է նախատել հայ յեղափոխականները որոնք իրենց կեանքը տուին իրենց գաղափարականին համար: Որո՞նք էին որ գրաւեցին Օթոման պանքան 1896 օգոստոս 14ին:

Քանի՞ համալսարանական ուսանողներ զոհեցին իրենց կեանքը: Քանի՞ զարգացած անձեր այսօր բանտերու մէջ կը հեծեն: Խնդրեմ, մի նախատէք մեր հերոսները, որոնք մեռան իրենց ազգային սուրբ դատին համար:

Իմ գաղափարով, դուք բարոյապէս պարտական էք հարստահարուած ազգերուն, բեմէն քարոզել Հայաստանի անտանելի վիճակին վրայ և թելադրել որ ժողովրդային մեծ միթիւններ կազմուին, որպէս զի հայկական խնդիրը գրուի Լահէի Վեհաժողովի սեղանին վրայ:

ՀՐԱՆԴ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պ. Չերազ Լահէի մէջ ըրաւ այն ամէնը, ինչ կրնար ընել մարդ մը: Երբ հարցը պարզորոշ կերպով դրուեցաւ անոր առաջ՝ մնալ հոն, դասախօսութիւններ կազմել և ատով տեսակ մը գործիք ըլլալ նաեւ տեղւոյն հակաօրհակ կուսակցութեան ձեռքը ու տապալել Պօֆօռի նախարարութիւնը՝ այն ատեն Պ. Չերազ դիմած է Խաղ. Ժողովի քանի մը պատուիրակներուն, որոնց մէջ է նաեւ իր վաղեմի ծանօթներէն մին, Սերպիական պատուիրակը, խորհուրդ խնդրած է իր բռնելիք ընթացքի մասին: Խորհուրդ են տուեր իրեն ու համոզեր, որ թողնէ Լահէն: Արդ՝ այժմ Պ. Չերազ

Բարիզ է, իր մշտական բնակատեղը:

Խաղ. Ժողովին ըրած գիմուը մէկ արգիւնք մը ունեցաւ. անգամ մըն ալ բողոքնիս լսելի ըրինք լուսաւոր աշխարհին, անգամ մըն ալ պարզօրէն ցոյց տուինք, որ Սուլթանի ստոր գործակալներու ըսածները՝ թէ Հայ բողոքը, հայ շարժումը մեռած է՝ ցրեցինք, փաստով ջրեցինք: Անգամ մըն ալ Եւրոպական բոլոր թերթերը գրեցին հայերու մասին և միթիւնաւոր ընթերցողներ զանոնք կարգացին... Եւ ո՞վ կրնայ ըսել, որ անոնցմէ գէթ քանի մը տասնեակ անձերու անկեղծ համակրանքը չչահեցանք:

— Յունիս 12ին, շաբաթ օր, խումբ մը երիտասարդներ, գսվելի եռանդէ մը մղուած, երկրորդ անգամ պիտի ներկայացնեն «Վանայ հայդուկները», ի նպատակ կրկին Վանայ սովեալներու: Այս ներկայացումը երկրորդ անգամ կը տրուի ժողովրդի ցանկութիւնով: Որոշուեր է ստուերը տոմսեր չը շրջել, այլ թողնել ամէն մարդու բարի կամօրին:

— «Փիւնիկ» կը հաղորդէ, որ Գահիրէի միթիւնիկին ներկայ են եղեր շուրջ 600 հոգի: Խորհուրդ կուտայինք «Փիւնիկ»ի չեղած «բազեր» օգը չնետել: Պ. Գալֆայեան ընտրուեր չէ Պ. Չերազի օգնելու համար: Մեր Ալեքսանդրիոյ թղթակիցը մանրամասն գրած էր տեղւոյն միթիւնիկի անցուդարձը և ատանկ բան մը չէ եղած հոն: Թերեւս առաջարկ մը եղած է ու չէ ընդունուած... այն ատեն չտրուած որոշման մը դէմ հարկ չկայ փայլը սուրով կուտելու ելլալ:

— Այս երեկոյ տեղի պիտի ունենայ Ս. Յարութիւն Չաքրեանի ի նպատակ տրուելիք ներկայացումը:

— Արաբկիրի մէջ ալ որբանոց մը պիտի բացուի. կահարասիներ, ամէն ինչ պատրաստ է: Տեղւոյն տեղապահը ընդարձակ տեղեկագիր մըն է շրջելը օտար որբանոցներու վրայ:

— Գահիրէցի Պետրոս Կարապետեան 30 ոսկի շրջած է պատրիարքարան Վանայ սովեալներու, 20 ոսկի ալ Փրնուզի վանքը վերանորոգելու համար:

— Նպատակը Յանձնաժողովը որոշած էր 25 որբեր խնամել Սոյ վանքին մէջ: Արդէն 20-22 որբեր հաւաքուեր են:

— Պարսկաստանէն 5,000 ֆր. շրջուած է ի նպատակ գաւառացի կարօտելոց:

— Կերտէս եպիսկ. Արսլանեան վերջապէս Վան հասեր է... արգէն Սրբազանը գիմեր է Պատրիարքարան և խնդրեր, որ Սրբաձանեան եպիսկոպոսի կապով թողած 1,000 ոսկին, որ այժմ 2,000 ոսկիի մը չափ դարձած է, գործադրուի իր նպատակին համար՝ այսինքն՝ Վանայ մէջ հիւանդանոց մը շինուի:

— Բարձրաստիճան եկեղեցական մը 330 ոսկի շրջած է պատրիարքարան ի նպատակ գաւառացի կարօտեալներու:

— Ալեքսանդրիոյ մէջ 224 անգլ. ոսկի հաւաքուեր է ի նպատակ Վանի կարօտեալներու և յանձնուեր Պողոս փառայի, որ ըստ իր բարեհայեցողութեան կարգադրէ:

— Ալեքսանդրիոյ լուրերը պարզ կը ցուցնեն, որ «թաղական կամ հոգաբարձու անպատճառ ազանները պիտի ըլլան» գաղափարը քիչ մը խախտուեր է: Ընտրուեր են բաւական յարմար երիտասարդներ իբր հոգաբարձու դպրոցի: Պ. Պ. Մութաֆեան, Գառնիկ Չպուգճեան, Լեւոն Աժաէրեան, Ալեքսան ձեղահիւրճեան և Տիգրան Կամսարական: Կը շնորհաւորենք այդ յաջող ընտրութիւնը:

— Կրօնական ժողովը որոշեր է մտնել միթիւնալութիւն մեր եկեղեցական երգեցողութեան մէջ:

— Մշակոյի Վանայ թղթակիցը կը գրէ, որ Պօլսէն հրաման է եկեր տեղւոյն վալիին «անվընաս» հայերը թողնել Պօլիս երթալու... Հաւատարմ է արդեօք...:

— Աղջկանց կրթարանի խնամակալութիւնը կը յայտնէ իր խորին շնորհակալութիւնները ի նպատակ կրթարանի առած յուսադահանգէսին մասնակցող բոլոր անձերուն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խաղ. Ժողովը չկրցաւ որ և է եղրակացութեան յանգիլ ստորջրեան նաւերու գործածութեան և նաւային նոր գիտերու առթիւ: Անգլիա և Միացեալ Նահանգներ, օգնական ունենալով շատ մը երկրորդական պետութիւններու ձայնը, ընդգիմացան ծովային նոր գիտերը գործածելու դէմ արուելիք որոշման: Հօլանտական պատուիրակի առաջարկը՝ գէթ 5 տարի ոչ մէկ նորմուծութիւն ընել հրացաններու մէջ՝ չընդունուեցաւ:

— Սօֆիայի մէջ անցեալ օրերը սպանուեցաւ Իսկիւպի վարժապետ Շակմանօֆը, ստանալով խէնջարի 21 հարուածներ: «Թան» կը գրէ որ սպաննուածը կրցեր է, շունչը փչելէ առաջ, յայտնել, որ վարնողները Մակեդոնական կամրաէի անդամներն էին: Սպաննութեան պատճառը Շակմանօֆի թուրք կառավարութեան հետ ունեցած յարաբերութիւններն են եղած:

— Անգլ. թերթերու ըսելով Ատէնի քովերը թուրքերը բռնել են Իտալական դրօշակ կրող երկու բռնանաւեր և ծառայողները տանջեր: Իտալական պիւնանաւ

մը Հատէիտա է գացեր բաւարարութիւն կը պահանջէ, սպաննալով ռմբակոծել քաղաքը, եթէ մերժեն:

— Պարսից ծոցի ափերու և Եգիպտոսի մէջ ժանտախտը պաշտօնապէս հաստատուեր է և արգէն սկսեր է զոհեր տանիլ:

— Տրէյֆիւսի համաշխարհային գործը կարծես վախճանին կը մօտենայ: Վճարելի ստեանը անհրաժեշտ տեսաւ վերաքննել գործը: Տրէյֆիւս Սատանայի կղզիէն կը բերուի Փրանսա վերաքննիչ նոր զինուորական ատեանի մը քննութեան ենթարկելու:

Էմիլ Զօլա վերադարձաւ Բարիզ: Արդարութիւնը կարծես պիտի յաղթանակէ:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Բարիզ. — Բանասերի խմբագրութեան, թերթը սկսեցինք կանոնաւորապէս ուղարկել: Ընդունեցէք խորին յարգանքներ:

— Թրքոյ-Օքնա. Յ. Փ. — Առաջին թղթակցութիւնն իջ տպելն անհնար է. նիւթը չնչին է եւ խիստ երկար: Գրեցէք նոյն նիւթի մասին, միայն խիստ համառօտ:

— Ամերիկա, Բրուտ. — Ձեր յօդուածը կը հրատարակուի միայն կրճատուած. նիւթը հին է եւ խիստ երկար:

Ք Ա Ն Ա Ս Է Ր

Հանդէս Հնախօսական, Պատմական, Լեզուաբանական և Քննական:

Տնօրինութեամբ Պ. Կ. Յ. ԲԱՍՄԱՅԱՆԻ:

Տարեկան 20 ֆրանք ամէն տեղ 4 գրքի համար, իսկ մէկ գիրքը 100 էջով, 6 ֆրանք:

Հասցէ՝ M. Basmadjian 112, B-d Rochechouart, 112 Paris

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Ազգային շաբաթաթերթ, տարեկան մէկուկէս տօլար, իսկ արտասահմանի համար 10 ֆրանք:

Հասցէ՝ Խմբ. Հայրենիքի 628 Third Avenue New York City (U. S. A.)

ԺԱՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂՆԸ
Գաւառ-Գաբրիւս
Բնական մի փորձ
Մամուլի տակ է եւ քանի մը օրէն լոյս կը տեսնուի:
Գրեց ԲԱՐԱ-ԳԱՍՊԱՐ,
Գին 50 ՍԱՆԴԻՄ
Յանկացողները թող դիմեն Շարժումի խմբագրութեան:

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна.